ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ բան.գիտ.թեկնածու,դոցենտ

Թումանյանի շառավիղները. Արտավազդ

Ուղեկցում ես բոլորին՝ մանկությունից ծերություն
Ինքդ մնում ես հավետ՝ Արարատի պես կանգուն:
Սուրեն Մուրադյան

Ամեն մի հայ իր հոգու խորքում Թումանյան ունի:Նա կարծես մեր մի մասնիկն է, որ վաղ մանկությունից թափանցում է մեր էության մեջ, հարազատի նման մտերմանում և ամբողջ կյանքում մենք մնում ենք նրա կախարդական գերության մեջ, նրա ստեղծագործությունների հետ մեծանում,իմաստնանում և փորձում գրողի խորհրդով աշխարհին նայել բարի սրտով ու պայծառ հայացքով:Իրավացի է Համո Սահյանը. «Ամեն տարիք ունի իր Թումանյանը ,ամեն սերունդ ունի իր Թումանյանը,ամեն ժամանակ,ամեն օր ունի իր Թումանյանը»[1]: Մեծերին բնորոշ զգացողությամբ Թումանյանն ասել է.»Ես գիտեմ,մի օր,իհարկե ոչ շուտ, իմ կյանքը մեծ հետաքրքրություն և աղմուկ է հանելու,շատ բան է պարզվելու,տեսնելու են բոլորովին ուրիշ բան...գրվածքներս դեռ լավ չեն կարդացել ,տեսել... Եվ ոչ ոք ուղիղը չի գտնելու, չի ասելու երբեք...»[2]:

Իրոք, ինչքան սահում է ժամանակը,ինչքան հեռանում ենք անմահ լոռեցուց և նրա դարաշրջանից, այնքան մեծանում է նրա ստեղծագործության հմայքը և այնքան ավելի հարազատ է դառնում նա մեզ:

Թումանյանի կյանքի ու ստեղծագործության մասին հազարավոր հոդվածներ,ուսումնասիրություններ են գրվել ու կգրվեն, և երբեք էլ չի սպառվի հետաքրքրությունը մեծ գրողի,ինչպես նաև նրա անբաժանելի մասը կազմող զավակների հանդեպ:Նրանք բոլորն էլ օժտված էին վեհ արժանիքներով,իսկ որդիներն իրենց տխուր ճակատագրերով՝ կմնան մեր ժողովրդի պատմության ու հիշողությունների մեջ:Անշուշտ,

1.»Հայրենիքի ձայն» , 1969թ., թիվ38:
2.Գ.Շախկյան,Թումանյանի ընտանեկան աշխարհը,Եր., 2011,էջ 74:

իր երեխաների գեղագիտական դաստիարակության հարցում մեծ դեր ուներ գրողը՝ իր հարուստ կենսափորձով,խորիմաստ պատգամներով,ինչպես նաև գրական այն միջավայրը,ուր ձևավորվում էր նրանց ճաշակն ու հետաքրքրությունները, անափ սերը՝ արվեստի,գրքի հանդեպ։Թումանյանն անչափ ուշադիր էր իր զավակների հանդեպ,չնայած իր սուղ պայմաններին,նա ամեն կերպ ընդառաջում էր նրանց ցանկություններին,օգնում իրականացնել երազանքները։ Թումանյանը նրանցից յուրաքանչյուրի մեջ փնտրում էր իր տաղանդի արձագանքը. «Ես կուզեի ամեն մեկիդ մեջ տեսնել իմ շունչը,իմ հոգու մի մասը...[3]»։ Զավակները բոլորն էլ,ծանոթ էին իրենց հոր ստեղծագործություններին,գրելու,թարգմանելու փորձեր էին արել և բանաստեղծի խորհրդին հետևելով՝ նրանք որոշ ժամանակ պահում էին օրագիր – հիշատակարան,իսկ չորրորդ զավակի՝ Արտավազդինը,ի ուրախություն ընթերցողի պահպանվել է և գտնվում է նրա անձնական արխիվում։Այն համապարփակ կողմերով ներկայացնում է շնորհալի երիտասարդի հետաքրքրությունները,պատանեկան անուրջներն ու բազում ծրագրերը։Ականատեսների վկայությամբ նա անչափ նման էր հորը թե՛ արտաքինով,թե՛ բնավորությամբ։Արտավազդը Վահան Թոթովենցի հուշերում հետևյալ բնութագրումն ունի.»Թումանյանի բոլոր զավակների մեջ Արտավազդն էր շատ նման իր հորը՝ արտաքին ֆորմաներով,ժպիտով,ձայնի տոնով , շարժումներով ու գույներով։Նա ուներ չափազանց գրական հակում,փորձում էր պիեսներ գրել,անսահման սեր ուներ դեպի մանուկները»[4]։ Ամենահարուստ արխիվը պատկանում է Արտավազդին։Պատահական չէր,որ Թումանյանի թանգարանի գիտական անձնակազմն ուսումնասիրելով մեծ գրողի ընտանեկան արխիվը՝ տարիներ առաջ նախաձեռնեց «Թումանյանի զավակները» մատենաշարի լույսընծայումը,որի մտահղացման սկիզբը դրվեց 2011թ.տպագրված «Աշխեն. Հուշեր և ընտանեկան պատմություններ» ժողովածուով,որին հետևեց Արտավազդ Թումանյանի նամականին։

Նշանավոր մարդկանց նամակները յուրահատուկ հետաքրքրություն

3.Իրմա Սաֆրազբեկյան,Թումանյանի ընտանիքի կյանքի էջերից,Թումանյան – 140,Եր., 2009, էջ 119։

4.Թումանյանը ժամանակակիցների հուշերում,Եր., 1969, էջ 138։

են ներկայացնում ոչ միայն այն պատճառով,որ այնտեղ ամփոփված են մեծերի կյանքի բեկորները, իմաստուն խոսքերը, խոհերն ու մտորումները, նրանց կենցաղի մանրամասները, տասնյակ ծրագրերն ու մտահղացումները, այլ դրանց միջոցով պատկերացում է կազմվում տվյալ ժամանակաշրջանի, հասարակական - քաղաքական իրավիճակի, մշակութային հարաբերությունների, անվանի մարդկանց գրական հայացքների, մտածողության չափանիշների վերաբերյալ,որոնք ուսանելի են այսօրվա և գալիք սերունդների համար: Գիրքը խոսուն փաստերի, ժամանակագրական կարգով և մանրամասնորեն ներկայացնում է վաղամեռիկ, տաղանդավոր երիտասարդ՝ Արտավազդի կյանքի ճանապարհը: Բավականաչափ հարուստ է նամականին, բազմաբնույթ բովանդակությամբ՝ ուղղված տարբեր մշակույթի գործիչների, գրողների, նկարիչների, հարազատների: Գրքում ընդգրկված մտերմիկ, անկեղծ հարաբերությունների վկայությունը հաստատող նամակների ընտրանին՝ առաջին հայացքից կարող է անձնական տպավորություն թողնել, բայց ընթերցման ժամանակ բացահայտվում է Թումանյանի որդին, իբրև տաղանդավոր արվեստագետ՝ օժտված գրելու և նկարելու մեծ շնորհով: Նրա նուրբ ու զգայուն ներաշխարհը, բազում երազանքներն ու սպասումները, իսկ տողերի արանքում անկարելի է չնկատել երիտասարդի անսահման սերը՝ հարազատների, հայրենի եզերքի, հոգևոր արժեքների հանդեպ:

Մանկական տարիներից փոքրիկ Արտիկը, ինչպես մտերմաբար անվանում էին հարազատներն ու մտերիմները, աչքի էր ընկնում իր բազմաշնորհությամբ՝ սիրում էր բանաստեղծություններ հորինել,նկարել, իր ուժերով փոքրիկ գրքույկներ կազմում, խմբագրում, ձևավորում, «հրատարակում»:

1907 թ. երբ ընդամենը 13 տարեկան էր Դ.Մամին-Սիբիրյակի «Քաջ նապաստակը» փոխադրում է հայերենի և տպագրում «Հասկերում»: Դսեղում բեմադրվել է Արտավազդի կողմից պիեսի վերածած «Գիքորը», որի ժամանակ խաղացել է Համբոյի դերը ՝ եղբոր Համլիկի հետ:Բեմադրությանը ներկա է եղել Թումանյանը:

Արտավազդի՝ Ներսիսյան դպրոցի դասընկեր,հետագայում բանաստեղծ,դերասան՝ Պահարեն հիշում է, ինչպես էին երկուսով ձեռա-

գիր ամսագիր հրատարակում «Թոթովանք» խորագրով:[5]

Մի առանձին գուրգուրանքով են ողողված հայ ժողովրդական դերասանուհի Հասմիկի նամակները՝ անսահման հոգատարություն, անհանգստություն՝ նրա ապագա ծրագրերի իրականացման համար և մեծ հավատ: Իր բարի խորհուրդներով Արտավազդին ներշնչել, զորավիգ է եղել Արմեն Տիգրանյանի քույրը՝ Արմենուհին, վերջինիս հետ անկեղծանալով, երիտասարդը հաճախ դժգոհում էր գորշ իրականությունից, չհասկացված լինելուց: Իսկ պատասխան նամակներում կարելի է հանդիպել խոստումնալից արվեստագետի հոգին խաղաղեցնող, պարզ ու գեղեցիկ տողերի, որոնք միաժամանակ գնահատում ու հասկանում են նրա արվեստը. « Ես լավ, շատ լավ եմ հասկանում քեզ և այն ներքին փոթորիկը, ինչ-որ կատարվում է քո ներսը: Աստծո տաճար է քո հոգին, նա ծաղկում է անմեղ ծաղիկներով, բայց մարդիկ սառն են խոսում քեզ հետ:

Ոչ ոք չկա, ա՛խ ոչ ոք, որ քեզ մտերմական ձեռքով գրկեր, որ կամացուկ շշնջար «քեզ, իմ մտերիմ, ես հասկանում եմ»[6]:

Հետաքրքիր նմանատիպ զգացողության պահեր է ապրել Թումանյանը.» Մարդ միշտ ունի մի քնքուշ էակի հետ գեղեցիկ, գեղարվեստական կապերով կապված լինելու կարոտը,երազային կյանքով երբեմն ապրելու տենչը»:[7]

Արտավազդի սերը թատրոնի, դրամատուրգիայի հանդեպ պաշտամունքի էր հասնում, չկար ոչ մի ներկայացում, որ բաց թողներ, գրում էր պիեսներ, թե՛ ժամանակակից, թե՛ պատմական թեմաներով «Ընկերը»,»Փանձելի»,»Նանե»: Նրա գրած պիեսների հերոսները տարբեր ժողովուրդների և ժամանակների հռչակավոր արվեստագետներ էին՝ Ռաֆայել,Ռուբենս, Տիցիան ,Վան Դեյկ,Լեոնարդո դա Վինչի: Պիեսներից «Վան Դեյկը» տպագրվել է «Հասկերում» 1911 թ., իսկ «Ռուբենսը՝

5. Թումանյանը ժամանակակիցների հուշերում,Եր., 2010,էջ 676 /Պահարե «Թումանյանը սկսնակների բարեկամ/:

6. Թումանյանի զավակները,Արտավազդ Թումանյան.Նամականի,Գիրք Ա., Եր., »Մուղնի» հրատ., էջ 69 – 70/:

7. Հովհաննես Թումանյան,Ասույթներ,թևավոր խոսքեր,կենսագրական և մատենագրական տեղեկություններ,Եր., 1969,էջ 114:

«Պատանի» ալմանախում և 1912թ. բեմադրվել է: Արտավազդը մեծ սիրահար էր հայ ճարտարապետության: Սիրում էր ճամփորդել, հետաքրքրվում էր ճարտարապետական հուշարձանների, կոթողների, եկեղեցիների պատմությամբ: Այդ է վկայում բանասեր, հնագետ, հետագայում կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Հովսեփյանին ուղղված նամակները, որտեղ խնդրում է իրեն ընդգրկել հնագիտական արշավախմբում: Եվ շատ չանցած նա ստանում է այնքան սպասված նամակը, ուր գիտնականը համաձայնությունն էր տալիս և հիացմունքի խոսքեր ուղղում երիտասարդին. «Հովհաննես Թումանյանի որդին չէր կարող անտարբեր լինել դեպի անցյալի սրբազան մնացորդները, ի սրտե ուրախ եմ, ոչ այն պատճառով, որ ինձ օգնել կարող եք, այլ որ Ձեր մեջ այդպիսի սեր և ձգտում կա»:[8]

Արտավազդին գնահատում ու փոխադարձ մտերմությամբ վայելում էին նրա բարեկամությունը Մ.Սարյանը, Վ.Տերյանը, Ղ.Աղայանը, Ալ.Շիրվանզադեն, Պ.Մակինցյանը, Ս.Գորոդեցկին, Ռ.Մելիքյանը և ուրիշներ:

Թումանյանի աչքից չի վրիպում՝ Արտիկի բնատուր տաղանդը նկարչության ասպարեզում:

Կերպարվեստի առաջին դասերն Արտավազդն առել է նկարիչ Եղիշե Թադևոսյանից:

Մեծ դժվարությամբ գրողը հայթայթում է անհրաժեշտ գումարը և որդուն ուղարկում Մոսկվա՝ սովորելու ռուս նկարիչ Կելինի արվեստանոցում: Արտավազդի ուրախությունն է արտահայտում այս նամակը. « Վերջապես ուշքի եկա երազած քաղաքի երազներից և քեզ գրում եմ առաջին նամակս: Չեմ կարծում, մի այլ քաղաքում էսքան լավ տեղավորվեի, էսքան լա՛վ զգալ, ինչպես Մոսկվայում: Չնայած դեռ չեմ մտել դպրոց, արվեստագետների շրջան, թատրոն և այլն… բավականի ունեմ էնպիսի բարեկամներ, որպիսին են Վահանն ու Մակինցյանը…»:[9]

Նամակներից հառնում է Արտավազդ Թումանյանը մի փոքր

8. Արտավազդ Թումանյան. Նամականի,գիրք Ա,Եր., »Մուղնի» հրատ., էջ 60:

9. Նույն տեղում. էջ 81:

չարաճճի,պատանեկան աշխույժ խառնվածքով,առօրյա հոգսերով ու խնդիրներով ապրող սովորական մարդ անհատը, կյանքում իր տեղը գտնելու անդադար որոնումներով ու փորձություններով լի ձգտումներով, քաղաքականության, արվեստի հարցերի շուրջ՝ իր լուրջ, խելացի դատողություններով, ազատ, անկաշկանդ ապրելու երազանքներով, ինչպես նաև բազմակողմանի հետաքրքրություններով ապրող արվեստագետը՝ վառ երևակայությամբ, մտքի թռիչքներով, զգացումների ու ապրումների փոփոխական տրամադրություններով, որոնք օգնում են ճանաչել նրան՝ իբրև մարդ, իբրև զավակ, եղբայր, ընկեր, մեծ սիրահար, զտարյուն արվեստագետ:

Շնորհալի պատանին անվերջ պարտքերի, հոգսերի մեջ է, բայց կենսուրախությունը, հումորը չեն լքում նրան, քանզի ծնողների օգնությունը, մոր հորդորները՝ չհուսահատվել, լավ սնվել, հարկ եղած դեպքում խնայել, հոր խրատները՝ լավ նկարիչ դառնալու համար սովորել, տեղեկություն հավաքել, ուսումնասիրել մեծ մարդկանց կյանքը և երբեք չվհատվել: Ընտանիքի անդամները թեկուզ իրարից հեռու, բայց մշտապես իրազեկ էին միմյանց հուզող խնդիրներին, դժվարություններին, ամենաչնչին թվացող կենցաղային հարցերն անգամ հեռակա կարգով լուծվում էին և դա ավելի էր մտերմացնում նրանց: Արտավազդին Մոսկվայում իր խորհուրդներով, մշտապես օգնելու պատրաստակամությամբ սատարում էր Մ.Սարյանը, գնահատում նրա բնատուր տաղանդը, ուսումնատենչ ոգին:Այս մտերմության արդյունքում,ինչպես նաև գրող ու նկարիչ Մ.Վոլոշինի՝ Մ.Սարյանին նվիրված հոդվածի անմիջական տպավորության տակ,Արտավազդը գրում է մի արժեքավոր ուսումնասիրություն «Մարտիրոս Սարյան» խորագրով[10],որը հետագայում բարձր գնահատվեց Էդվարդ Ջրբաշյանի և կերպարվեստագետ Մանյա Ղազարյանի կողմից : Պատանու համար այդ ժամանակահատվածը՝ 1913 – 1914 թթ., շատ երջանիկ տարիներ էին: Բայց սկսվում է առաջին համաշխարհային պատերազմը: Վերադառնալով Թիֆլիս՝ նա զորակոչվում է բանակ և պարտադիր զինվորական ծառայությունից հետո, կամավոր մնում աշխատելու

10.»Գրական Թերթ»,1980,մայիսի 23:

«Միջազգային Կարմիր խաչի Համառուսական քաղաքների միության» կովկասյան կոմիտեում: Արտավազդը լուրջ աշխատանքային գործունեություն է ծավալում « Հայ երիտասարդների կոմիտեում» / 1915 – 1918 թթ./:1916 թ. նշանակվում է Վանի լիազոր ներկայացուցիչ:
1917թ.Վանում եղած ժամանակ,Արտիկը մասնակցել է գիտնականներ Ն.Ադոնցի և Ա.Քալանթարի հնագիտական արշավախմբի աշխատանքներին:ՈՒսումնասիրելով Աղթամարի ձեռագրերը՝ հայտնաբերել է Գրիգորիս Գեղեցիկի տաղերը,արտագրել՝ փրկելով դրանք ոչնչացումից:
Գրքում մեծ տեղ է հատկացված ռազմաճակատից նրա ուղարկած նամակներին, որոնցում արտացոլված են 20–րդ դարասկզբին Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդին բաժին հասած ողբերգական դեպքերը: Նա սրտացավությամբ կատարում է իրեն վստահված գործը, հայ գաղթականներին ապահովում սննդով, բուժօգնությամբ, բաց անում ժամանակավոր կացարաններ, հիվանդանոցներ: Հայրենասեր երիտասարդը անգամ մարտի դաշտում անտարբեր չի հայրենի բնաշխարհի հանդեպ, քրոջը՝ Նվարդին հասցեհագրած մի նամակում գրում է. «Ապա թե իմանաս ինչ գեղեցիկ, սրբազան վայրերով եմ անցել, բավական է տամ Ավարայրի դաշտի անունը… ինչ սքանչելի է… էս դաշտերով, ճամփաներով ի՜նչ թագավորներ, իշխաններ, ի՜նչ դեմքեր են անցել: Մնացել եմ զարմացած Ռաֆֆու վրա, թե ինչ վարպետորեն, ճիշտ և գեղեցիկ է նկարագրել ամեն մանրամասնություն, ինչ թախծոտ աչքեր է ունեցել էդ « անհանգիստ հոգին « , ի՜նչ զգացմունքներով է փայփայել ամեն մի գրելիք տողը…»:[11]

Նամակների մեջ առանձնանում են Արտիկի կյանքի անհայտ էջերը բացահայտող, պատանեկան սիրո անուշ մորմոքով գրված տողերը՝ ուղղված անգլուհի Էլիզաբեթ Արմսթրոնգին: Վերջինս , աշխատանքի բերումով « Միջազգային Կարմիր Խաչի գթության քույր» , այդ օրերին ծանոթանում է Արտավազդի հետ և նրան սովորեցնում անգլերեն:Թերթում ես նամակները, որոնք պատմում են մաքուր ու անբիծ սիրո, անկատար երազների մասին, իսկ բանաստեղծական տողերը սիրո ինքնատիպ խոստովանության դրսևորումներ են.

11.Նույն տեղում,էջ 159:

Քո ձայնը,ասես հեքիաթում լինի,
Երբ լուռ է ամենը,ամենը ի քուն։
Խաղաղ գիշերը,դյութական. . . գինի. . .
Դու օտար աղջիկ իմ հայրենիքում։
Երկուսս էլ լռում ենք, օտար լեզուներ,
Ժպիտով ենք խոսում, լռությամբ սիրում,
Ա՜խ ամեն մեկս որքան սեր ուներ
Իրար պատմելու, իրար ասելու։[12]

Առանց հուզմունքի անկարելի է կարդալ Արտավազդի Վանից ուղարկված նամակները հարազատներին, ուր ասես կանխազգում էր իրեն սպառնացող վտանգը։
Իսկապես Վանի երկրորդ նահանջի ժամանակ զոհվում է Արտիկը։Նրա մահը Թումանյանի անձնական մեծագույն ողբերգությունն էր,որից նա այդպես էլ ուշքի չեկավ։

Սերգեյ Գորոդեցկին Թումանյանի ընտանիքի հավատարիմ բարեկամն ու Արտավազդի ընկերը,անհուն ցավով գրել է.»Ինչքան շատ ստեղծագործական ուժեր խորտակվեցին նրա մեջ,ափսոս նրա սիրտը,որ լեցուն էր թումանյանական ջերմ արյամբ։Արտավազդին ծաղկում էր սպասվում. . .»։[13]Իսկ սգակիր հորն ուղղված տողերում կարդում ենք.»Իմ վիշտը թվում է փոքրիկ մի մթնշաղ Ձեր վշտի ահռելի գիշերի հանդեպ. . .Ձեզ հետ միասին նայում եմ դատարկված աշխարհին ու սպասում այն պահին,երբ մեր հայացքը կդարձնենք դեպի հավերժական աստղեր,որտեղ այժմ գտնվում է Արտիկի հոգին»։[14]

Արտավազդի մահը անդառնալի կորուստ էր Թումանյանի համար,գրչակից ընկերները հաճախ են անդրադարձել լռության մեջ տառապող հոր ցավերին,գրողի հոգեվիճակին։ Շիրվանզադեն իր «Բանաստեղծն ու հայրը» հոդվածում / 1933թ./ հիշում է Թումանյանի հոգեցունց խոսքերը,ասված իր հիսունամյակի օրը.

12. Ա. Թումանյան,նշվ. գիրքը /Հավելված,բանաստեղծություններ նվիրված Է. Արմսթրոնգին/ ,էջ 263։
13. Նույն գիրքը,էջ 15։
14. Ս. Գորոդեցկի,Հայաստանի և հայ կուլտուրայի մասին,Եր., 1980, էջ 282 – 286։

« Բայց հավատա,այսօր ես իմբոլոր ստեղծագործությունները կրակին կնվիրեի,միայն թե վերադարձնեին ինձ իմ կորած որդուն. . .

Նա չէր դադարում և մինչև մահվան ժամը չդադարեց ողբալ իր այն ամենից սիրված որդուն,որ իմպերիալիստական պատերազմի անմեղ զոհերից մեկը դարձավ և որին նա փայփայել էր իր զգայուն հոգու ամբողջ զորությամբ»:[15]

Տարիներ հետո Է.Ջրբաշյանը «Պոետի որդին» հոդվածում պետք է գրեր.»Մեծ ընտանիքից առաջինը զոհվեց Արտավազդը , իր հետ տանելով տաղանդավոր արվեստագետի խորտակված ապագան,Թումանյանի կյանքի վերջին տարիները լցնելով անփարատելի վշտով»:[16]

Արտավազդ Թումանյանի թողած թանկագին մասունքները՝ գրական երկեր,կտավներ,արժեքավոր ուսումնասիրություններ վկայում են և հաստատում պոետի տողերը «Որքան ծաղիկ պիտի բուսներ,որ չբուսավ էս հողին», եթե ճակատագիրն այդքան անողոք չգտնվեր տաղանդավոր արվեստագետի հանդեպ:

15.Գ.Շախկյան,Թումանյանի ընտանեկան աշխարհը,Եր.,2011,էջ132:

16.»Գարուն» ,1977,թիվ 9, էջ 45- 47/ Է.Ջրբաշյան «Պոետի որդին»/ :

2020թ.

Բանալի բառեր.

ճակատագիր,ժողովուրդ,հիշողություն,տխրություն,Թումանյանի

զավակները:

Ключевые слова судьба , народ , воспоминание, тоска , дети

Туманяна.

Key words. fate,people,memory,sadness, Tumanyan`s children.

Թումանյանի շառավիղները. Արտավազդ

Ամփոփում

Թումանյանի զավակների մեջ առանձնանում է Արտավազդը, իբրև տաղանդավոր արվեստագետ՝ օժտված գրելու և նկարելու մեծ շնորհով:Նրա ողբերգական մահը անդառնալի կորուստ էր Թումանյանի համար:

Дети Туманяна: Артавазд

Резюме

Среди детей Туманяна Артавазд отличается с болшим талантом к письму и живописи как талантливый художник.Его трагическая смерть стала необратимой потерей для Туманяна.

Tumanyan’s children: Artavazd

Summary

Among Tumanyan`s children Artavazd was the best like a talented artist with a good talent of writing and painting. His tragic death was irreversible loss for Tumanyan.